Ի. Ղ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾՈՒԹԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բարձր զարգացած գյուղատնտեսությունը սոցիալիստական ամբողջ էկոնոմիկայի հետագա վերելքի և սովետական ժողովրդի կենսամակարդակի անշեղ բարձրացման անհրաժեշտ պայմանն է։ ՍՄԿԿ XXIII համագումարը, սահմանելով արդի էտապում կոմունիստական շինարարության կոնկրետ ուղիները, առաջնահերթ նշանակություն տվեց գյուղատնտեսության զարգացմանը և նրա հետևողական ինտենսիվացմանը։

Սոցիալիստական գյուղատնտեսությունը էկոնոմիկայի կարևորագույն ճյուղ է, որից կախված է սովետական ժողովրդին նորմալ կերպով սննդամթերքներ, իսկ արդյունաբերությանը՝ հումք մատակարարելը։ Գյուղատնտեսության զարգացումը զգալի չափով ապահովում է ազգային եկամտի աճը, բնակչության կյանքի նյութական մակարդակի բարձրացումն ու սոցիալտնտեսական միջոցառումների իրագործումը։

Գյուղատնտեսությունը ներկա պահանջների մակարդակին հասցնելու գլխավոր ու վճռական գործոններից է գյուղատնտեսական բոլոր կուլտուրաների բերքատվության աճի, հողագործության կուլտուրայի բարձրացման և անասնապահության մթերատվության շեշտակի ավելացման ապահովումը։

Կոլտնտեսությունների և սովխոզների էկոնոմիկայի հետագա ամրապնդման ու զարգացման համար կարևոր նշանակություն ունեցան գյուղատնտեսական մթերքների պետական գնման բարձր գների սահմանումը, ֆինանսական օգնությունը, եկամտահարկի և պլանավորման նոր կարգի հաստատումը։

1965 թ. մարտին և ապրիլին ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը կարևոր որոշումներ ընդունեցին կոլտնտեսություններին ֆինանսական օգնություն ցույց տալու, հողագործության արմատական բարելավման ծախսերը պետական բյուջեի հաշվին կատարելու և տնտեսական մի շարք այլ միջոցառումների մասին։ Այդ որոշումներով կոլտնտեսություններին զիջվեց ՍՍՀՄ պետական բանկից վերցրած մոտ երկու միլիարդ 10 միլիոն ռուբլի գումարի վարկը, ինչպես նաև 120 միլիոն ռուբլու այն պարտքը, որ կոլտնտեսություններն ունեին պետության հանդեպ՝ իրենց ձեռք բերած տեխնիկայի, շինանյութերի և սարքավորումների դիմաց։ Այդ որոշման համաձայն, զիջվեց նաև Հայաստանի կոլտնտեսությունների՝ տեխնիկայի և շինանյութերի ձեռք բերման համար պետությունից վերցրած վարկի 17 միլիոն 804 հազար ռուբլու պարտքը, իսկ մթերող կազմակերպությունների կոնտրակտացիոն պայմանագրերով ստացած մեկ միլիոն 500 հազար ռուբլու պարտքերի մարման ժամկետը երկարացվեց մինչև 1970 թվականը։

Կոլտնտեսությունների հարկման նախկին ձևը շատ դժվարություններ էր ստեղծում ու արգելակում տնտեսության առաջընթացը։ Մինչև նոր որոշումը

եկամտահարկ էր գանձվում անգամ վնասով աշխատող կոլտնտեսությունների համախառն եկամուտներից։

Մեծ թվով մանր ու տնտեսապես թույլ կոլտնտեսություններ եկամտահարկը ստիպված էին վճարել աշխօրերի դիմաց տրվելիք եկամուտների, իրենց շրջանառու միջոցների կամ պետությունից ստացած վարկերի հաշվից։ Հարկման ոչնչով չարդարացված նման վիճակը արգելակում էր գյուղատնտեսության առաջընթացը, տեղին դժգոհություն առաջացնում գյուղի աշխատավորների մեջ։ Կոմունիստական կուսակցության հոգատարության շնորհիվ այդ սխալը ևս ուղղվեց։ Հարկման նոր կարգի պայմաններում ներկայումս Հայաստանի կոլտնտեսությունները, նախկինի համեմատությամբ, ավելի քան 3 անգամ պակաս եկամտահարկ են վճարում։ Եկամտահարկ չեն վճարում այն կոլտնտեսությունները, որոնք չեն ապահովում իրենց շահույթաբեր աշխատանքը և կոլտնտեսականների միջին ամսական 60 ռուբլուց բարձր վարձատրությունը։ Այդ որոշման շնորհիվ է, որ 1966 թ. Հայաստանում 283 կոլտնտեսություններ (մոտ 45 տոկոսը) բոլորովին եկամտահարկ չվճարեցին, իսկ մնացած տնտեսությունները, նախկինի համեմատությամբ, զգալիորեն քիչ վճարեցին։

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1965 թ. ապրիլի 10-ի հրամանագրով եկամտահարկի գծով լրացուցիչ արտոնություններ սահմանվեցին վերաբնակվածների տնտեսություններից կազմակերպված, ինչպես նաև վերաբնակեցվածներ ունեցող կոլտնտեսությունների համար։ Գործող նոր օրենքի համաձայն, գյուղատնտեսության առանձին ճյուղերի զարգացումը խթանելու նպատակով որոշ կոլտնտեսություններ ազատվում են եկամտահարկ վճարելու պարտավորությունից։

Եկամտահարկի նոր կարգի սահմանումը կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության կողմից գյուղատնտեսության աշխատողների նկատմամբ ցուցաբերվող հոգատարության վկայությունն է։ Այն մեծ չափով օգնում է տնտեսապես թույլ կոլտնտեսություններին առաջավորներին հասցնելուն, խթանում ֆինանսատնտեսական գրության բարելավմանը, ինչպես նաև բնակլիմայական անհավասար պայմաններում գտնվող տնտեսություններում հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրությունն ապահովելուն։ Եկամտահարկի չափերի իջեցումից երկրի կոլտնտեսությունների տարեկան օգուտը կազմում է դրեթե 500 միլիոն ռուբլի[1]։

Հայաստանի գյուղատնտեսության ֆինանսավորման համար 1965 թ. պետական բյուջեից ծախսվել է 80,6 միլիոն ռուբլի, կամ նախորդ տարվա ծախսից 22,6 տոկոսով ավելի։ Դրանից բացի, գյուղատնտեսական մթերքների գնման գների բարձրացման կապակցությամբ 1965 թ. բաց է թողնվել 20,5 միլիոն ռուբլի։ Այսինքն, միայն մեկ տարվա ընթացքում Հանրապետության գյուղատնտեսությանը պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 101 միլիոն ռուբլի[2]։

Եկամտահարկի նոր օրենքի կենսագործման շնորհիվ մեր Հանրապետության կոլտնտեսությունները յուրաքանչյուր տարի շահում են ավելի քան 3 միլիոն ռուբլի։ Գյուղատնտեսական արտադրության զարգացման համար վճռական նշանակություն ունի աշխատողների անձնական նյութական շահա-

---

1 «Правда», № 342, 1965։

2 Տե՛ս Հայկական ՍՍՀ VI գումարման Գերագույն սովետի VIII սեսիայի նյութերը, «Սովետական Հայաստան», № 199, 1966։

գրգռվածության բարձրացումը։ 1958—1962 թթ. ընթացքում վերացվեց 1940 թ. գործող խրախուսանքի այն սիստեմը, որի համաձայն բամբակ և շաքարի ճակնդեղ մշակող կոլտնտեսություններին տրվում էր պարգև-հավելումներ, արտոնյալ գներով հացահատիկ և այլ ապրանքներ։

Նյութական շահագրգռվածության այդ միջոցների վերացման պատճառով. բամբակի և շաքարի ճակնդեղի բերքատվությունը և համախառն բերքը նվազեցին։ Այդ սխալը 1963 թ. ուղղվեց ու վերականգնվեցին նախկինում գործող խրախուսանքի միջոցները։ Արդյունքն եղավ այն, որ նույն տարում բամբակի բերքատվությունը բարձրացավ, հեկտարից ստացվեց 21,5 ցենտներ, 1962 թ. 18 ցենտների փոխարեն, իսկ շաքարի ճակնդեղի բերքատվությունը՝ ավելի բարձրացավ և նրա մթերումների ծավալը 1964 թ. գրեթե կրկնապատկվեց[3]։

Վ. Ի. Լենինը սովորեցնում էր, որ տասնյակ միլիոնավոր մարդկանց կոմունիզմին հասցնելու համար հարկավոր է էկոնոմիկան կառուցել ոչ թե անմիջականորեն խանդավառության վրա, այլ մեծ հեղափոխության ծնունդ տված խանդավառության օգնությամբ՝ անձնական շահի վրա, անձնական շահագրգռվածության վրա, տնտեսական հաշվարկի վրա[1]։

Տնտեսության սոցիալիստական սիստեմում աշխատավորների անձնական շահերն ավելի ու ավելի մեծ չափով են համընկնում հասարակության շահերին։ Ուստի, գյուղի աշխատավորության նյութական շահագրգռվածության սկզբունքը ճիշտ կիրառելու շնորհիվ կոլտնտեսականներն ու սովխոզների բանվորները ավելի լավ են աշխատում՝ հօգուտ հասարակության և իրենց։

Լուրջ թերություններ կային նաև գյուղատնտեսական մթերքների մթերումների սիստեմում։ Հացահատիկի մթերման ու վաճառքի պլանային առաջադրանքների ռեալ չլինելու (մեծամասամբ բարձր լինելու) պատճառով, շատ կոլտնտեսություններ ու սովխոզներ մթերումների պլանները կատարելուց հետո, իրենք ստիպված՝ պետությունից սերմացու էին խնդրում։ Այդ նպատակի համար պետությունը 1962 թ. բաց է թողել մեկ միլիոն 373 հազար տոննա սերմացու, իսկ 1965 թ. համար պետությունը երկու միլիոն տոննա սերմացուի հայտ էր ստացել։ Ոչ ճիշտ պլանավորումն էր հիմնական պատճառը, որ 1955—1964 թթ. ընթացքում միայն երեք անգամ (1956, 1958 և 1964 թթ.) կատարվեց հացահատիկի գնման պլանները[5]։

Գյուղատնտեսական մթերքների մթերումների ու գնումների պետական գնման նման սիստեմը ոչ միայն չէր խթանում գյուղի աշխատավորության նախաձեռնությունը, այլ մեծ արգելք էր հանդիսանում սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման ճանապարհին։ Այսպես, օրինակ, Հայաստանի կոլտնտեսություններում ու սովխոզներում մեկ տոննա հացահատիկային կուլտուրայի արտադրության համար միջին հաշվով ծախսվում էր 90—100 ռուբլի, մինչդեռ այն պետությանը վաճառվում էր 70—80 ռուբլով, այսինքն նրա ինքնարժեքից ցածր։ Նման վիճակ գոյություն ուներ նաև մի շարք այլ մթերքների նկատմամբ։ Այդպիսի պայմաններում լրիվ բացառվում էր կոլտնտեսականների ու սովխոզների աշխատողների անձնական շահագրգռվածությունը հա-

3 ՍՄԿԿ Կենտկոմի մարտյան պլենումի նյութերից. «Правда», № 86, 1965։
1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 44, էջ 151, ռուսերեն։
5 «Правда», № 86, 1965։
6 Նույն տեղում։

ցահատիկային և այլ կուլտուրաների արտադրության ընդլայնման նկատմամբ։

Գյուղատնտեսական մթերքների ու հումքի գնումների միայն մեկ տարվա համար պլանավորման նախկին կարգը (որը շատ հաճախ փոփոխման էր ենթարկվում տարվա ընթացքում, ավելացվում էր ու մեծ ուշացումով, իջեցվում տնտեսություններին), ոչ միայն թուլացնում էր կոլտնտեսությունների և սովխոզների էկոնոմիկան, այլ նաև բացառում էր գյուղատնտեսության աշխատողների աշխատանքի նկատմամբ նյութական շահագրգռվածությունը, դրանով իսկ վնասում նաև պետությանը։

ՍՄԿԿ Կենտկոմի մարտյան (1965 թ.) պլենումը լուրջ միջոցներ ձեռնարկեց գյուղատնտեսական ու անասնապահական մթերքների մթերումների գործն արմատապես բարելավելու համար։ Վճռական նշանակություն ունեցավ գյուղատնտեսական մթերքների պետական գնման գների բարձրացումը։ Մարտյան պլենումի որոշումների անշեղ կենսագործման շնորհիվ է, որ 1965 թ., չնայած կլիմայական անբարենպաստ պայմաններին, երկրի կոլտնտեսություններն իրենց իրացված արտադրանքից, 1964 թ. համեմատությամբ, 2,5 միլիարդ ռուբլուց ավելի եկամուտ ստացան[7], իսկ գների բարձրացման հետևանքով Հայաստանի կոլտնտեսությունները 1965 թ., նախորդ տարվա համեմատությամբ, ստացան 64,4 տոկոսով ավելի եկամուտ[8]։

ՍՄԿԿ Կենտկոմի մարտյան պլենումի որոշումների համաձայն, 1965 թ. միայն Թալինի շրջանի կոլտնտեսություններին զիջվեց մեկ միլիոն 163 հազար 600 ռուբլի վարկը և նախկին ՄՏԿ-ներից գնված տեխնիկայի պարտքը։ Դեռ ավելին, այդ նույն տարում շրջանի կոլտնտեսություններն ու սովխոզները պետությունից ստացան 350 հազար ռուբլու նոր վարկ՝ տեխնիկայի գնման ու կապիտալ շինարարության համար[9]։ Գյուղատնտեսական մթերքների պետական գնման գների բարձրացման շնորհիվ Թալինի շրջանի կոլտնտեսություններն ու սովխոզները ստացան կես միլիոն ռուբլու լրացուցիչ եկամուտ։ Այդ բոլորի շնորհիվ նրանք հնարավորություն ստացան պետությունից գնել մեկ միլիոն 62 հազար ռուբլու նոր մեքենաներ, սարքավորում և նյութեր[10]։

Գյուղատնտեսական մթերքների մթերումների նոր կարգի համաձայն, Հայաստանի կոլտնտեսություններն ու սովխոզները 1965 թ. սկսած, նախորդ տարվա համեմատությամբ, երեք անգամ պակաս հացահատիկ պետք է վաճառեն պետությանը։ Հացամթերման պլանների պակասեցման և մեր հանրապետությունում բամբակը մշակությունից հանելու շնորհիվ, մեծ հնարավորություններ են ստեղծվում կերի կայուն բազայի ստեղծման, հետևապես նաև անասնապահական մթերքների արտադրության ավելացման համար։ Արարատյան դաշտի տնտեսություններում, դրա հետ միասին, ավելի մեծ հնարավորություններ են ստեղծվում բանջարաբոստանային կուլտուրաների, պտղաբուծության ու խաղողագործության զարգացման համար։ Գյուղատնտեսական մի շարք մթերքների պետական գնման գների բարձրացման շնորհիվ 1965 թ.

---

7 Տե՛ս «Вопросы истории КПСС», № 8, стр. 8, 1966.

8 Տե՛ս «Սովետական Հայաստան», № 191, 1966։

9 ՀԿԿ Թալինի շրջանային կազմակերպության 1965 թ. դեկտեմբերի վերջերին հրավիրված կոնֆերանսի նյութերից։

10 Նույն տեղում։

Հայաստանի կոլտնտեսություններն ու սովխոզները մեծ օգուտներ ստացան։ Նրանք, եթե 1964 թ. միայն պետությանը վաճառած մսից 7 միլիոն ռուբլու վնաս էին կրել, ապա 1965 թ. վաճառած մսի դիմաց ոչ միայն վնաս չկրեցին, այլ մոտ 17 միլիոն ռուբլու շահույթ ստացան[11]։

ՍՄԿԿ Կենտկոմի մարտյան պլենումից հետո զգալիորեն բարելավվեց գյուղատնտեսական մթերքների մթերումների սիստեմը։ Գյուղատնտեսական մի շարք մթերքների և հացահատիկային կուլտուրաների պետական գնման գների բարձրացումից բացի, ՍՍՀՄ Մինիստրների սովետը, մթերումների սիստեմն ավելի կատարելագործելու նպատակով, սահմանեց գյուղատնտեսական մթերքների կոնտրակտացիոն նոր տիպային պայմանագրեր։ Այդ պայմանագրերի կնքումով, մեկ կողմից կոլտնտեսությունների ու սովխոզների, իսկ մյուս կողմից գյուղատնտեսական հումքը մշակող արդյունաբերական ձեռնարկությունների միջև ավելի ուժեղ կապ է հաստատվում։ Կոնտրակտացիոն պայմանագրերը ներկայումս կնքված են ոչ թե նախկինի պես մի քանի ամսով կամ մեկ տարով, այլ ավելի երկար ժամկետով (1965—1970 թթ.), որով փոխադարձորեն բարձրացվում է տնտեսությունների և մթերողների պատասխանատվությունը և նրանց միջև ստեղծում հարատև ու նորմալ փոխհարաբերություններ, հնարավորություններ տալով հեռանկարային միջոցներ ձեռնարկելու։

Կոնտրակտացիոն պայմանագրերով սահմանվում է ավելցուկ գյուղատնտեսական մթերքները պլանից դուրս բարձր գներով պետությանը հանձնելու քանակը, որակը և հանձնման ժամկետները, տրվող դրամական ավանսի չափը, ինչպես նաև մթերող կազմակերպության կողմից տարաներով, անհրաժեշտության դեպքում՝ տրանսպորտով ապահովումը, մթերքների ընդունման որոշակի ժամկետները, որոնց խախտման դեպքում՝ պատասխանատու կազմակերպությունները մուծում են սահմանված չափի տուգանքը և փոխհատուցում կոլտնտեսության կամ սովխոզի կրած վնասը։ Գյուղատնտեսական մթերքների և հումքի գնման կատարելագործված նոր սիստեմի մեջ ներդաշնակորեն հաշվի են առնված պետության, կոլտնտեսությունների և սովխոզների շահերը։

ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը 1965 թ. ապրիլի 10-ին մթերումների նոր կարգի մասին կայացրած իրենց որոշման մեջ[12] սահմանեցին, որ կոլտնտեսություններից և սովխոզներից ցորենի և տարեկանի ավելցուկների արտապլանային գնումը կատարվելու է կամավոր հիմունքներով, առանց տնտեսություններին լրացուցիչ առաջադրանք տալու, մինչդեռ մթերքների ու հացահատիկի «կամավոր» հանձնման (վաճառման) սահմանված կարգն մինչ այդ հարկադիր բնույթ էր կրում։ Նոր որոշմամբ վերացվեց գնման գները ամեն տարի փոխելու նադկինում գոյություն ունեցող կարգը։

1965—1970 թթ. գյուղատնտեսական մթերքների գնումների պլանները կոլտնտեսություններին ու սովխոզներին իջեցվեց յուրաքանչյուր տնտեսության նկատմամբ դիֆերենցված մոտեցումով։ Հաշվի են առնվել նրանց էկոնոմիկայի զարգացման հեռանկարները, մասնագիտացումը և տնտեսությունում արտադրանքից որոշ բաժին թողնելու անհրաժեշտությունը (սերմացու, կեր),

---

11 Հայաստանի կոմկուսի XXIV համագումարի նյութերից։

12 «Правда», № 102, 1965։

արտադրությունն ընդլայնելու և կոլտնտեսականների անձնական պահանջմունքները բարելավելու պահանջները։ Դա մեծ չափով նպաստեց գյուղատնտեսության աշխատողների, մասնագետների, տնտեսությունների ղեկավարների նախաձեռնության ու անձնական շահագրգռվածության բարձրացմանը և արտադրության ընդլայնմանը։

ՍՍՀՄ Միիստրների սովետը սահմանեց պետությանը վաճառվող ցավարի, ոչխարի, այծի և խոզի գնման նոր՝ բարձր գներ, որի համաձայն՝ 1965 թ. մայիսից սկսած մեր հանրապետության լեռնային շրջանների կոլտնտեսություններից, սովխոզներից ու մյուս պետական տնտեսություններից միս գնվում է մինչ այդ գործած գների համեմատությամբ 100 տոկոսով հավելումով։

Կոլտնտեսություններին ու սովխոզներին խրախուսելու և մթերքների ավելացման գործում նրանց շահագրգռվածությունն ավելի բարձրացնելու համար սահմանվեց, որ պլանից ավելին պետությանը վաճառված հացահատիկի, մթերքների և հումքի համար տրվում է լրացուցիչ գումար՝ հիմնական գնման գների 50—70 տոկոսի չափով։

Գյուղատնտեսական մթերքների պետական գնումների կայուն պլանների սահմանումը և գների բարձրացումը մեծ հնարավորություններ ստեղծեցին ավելի խոր մասնագիտացնելու կոլտնտեսային և սովխոզային արտադրությունը, որն իր հերթին նպաստեց արտադրանքի ավելացմանը, ինքնարժեքի իջեցմանը և կոլտնտեսությունների ու սովխոզների շահութաբերության բարձրացմանը։ Այդ միջոցառումների շնորհիվ գյուղատնտեսությունը դրվեց տնտեսական ամուր հիմքի վրա, միաժամանակ պետությունը հնարավորություն ստացավ ավելի շատ հացահատիկ, միս և այլ մթերքներ ու գյուղատնտեսական հումք գնել։

1966 թ. մայիսի սկզբին ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ Մինիստրների սովետը որոշում ընդունեցին «Հանրային արտադրության զարգացման ասպարեզում կոլտնտեսականների նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու մասին»[13]։ Այդ որոշմամբ, կոլտնտեսություններում 1966 թ. հուլիսի 1-ից մտցվել է կոլտնտեսականների աշխատանքի ամենամսյա երաշխավորված վարձատրության (դրամով և բնամթերքով) սիստեմ՝ ելնելով սովխոզների աշխատողների համապատասխան կատեգորիաների տարիֆային դրույթներից, իսկ վերջնական հաշվառք կատարում են տնտեսական տարվա վերջի տվյալներով։ Դրա համար կոլտնտեսությունների արտադրական-ֆինանսական պլաններով ստեղծվում են անհրաժեշտ դրամական և բնամթերային ֆոնդեր։

Կուսակցության և կառավարության այս նոր որոշմամբ է, որ կոլտնտեսականները կարող են աշխատանքի երաշխավորված վարձատրության հաշվին ստանալ հացահատիկ և այլ մթերքներ, ինչպես նաև կեր իրենց անասունների համար՝ կոլտնտեսության ընդհանուր ժողովի սահմանած չափերով ու կարգով։ Կոլտնտեսականների աշխատանքի վարձատրման նոր կարգը ելնում է նրանից, որ ավելացվի գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, բարձրանա աշխատանքի արտադրողականությունը, վերացվեն վարձատրման գործում եղած թերությունները, կրճատվեն կառավարչական ու սպասարկող անձնակազմի հաստիքները, արտադրողական ծախսերը և խստիվ .կենսագործվի խնայողության ռեժիմը։

---

13 «Սովետական Հայաստան», 1966, № 115։

Այդ որոշման համաձայն, կոլտնտեսությունների սեփական միջոցները պակասելու դեպքում, ՍՍՀՄ պետրանկը պարտավոր է այդպիսի կոլտնտեսություններին տրամադրել վարկ հինգ տարի ժամկետով՝ շրջկոմների միջնորդությամբ։ Վարկը կոլտնտեսությունները սկսում են մարել ստացման երրորդ տարվանից՝ բյուջեի վճարումներից հետո։

Կոլտնտեսականների և կոլտնտեսությունների նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու ծավալուն ծրագիրը, որը մշակեց ՍՄԿԿ Կենտկոմի մարտյան պլենումը, բարերար ազդեցություն ունեցավ երկրի կոլտնտեսությունների էկոնոմիկայի արագ զարգացման վրա։ Գյուղատնտեսական արտելների եկամուտների արագ աճը պայմաններ ստեղծեց ոչ միայն արտադրության վերելքի, այլև կոլտնտեսականների առատ վարձատրության համար։

Հանրապետության կոլտնտեսությունների մեծ մասում 1966 թ. հուլիսի վերջերից կոլտնտեսականները ստացան իրենց անդրանիկ երաշխավորված վարձատրությունը։

Շահումյանի շրջանի ՍՄԿԿ XXII համագումարի անվան կոլտնտեսությունում 1958 թ. կիրառվում է աշխատանքի դրամական վարձատրության երաշխավորված սիստեմը։ Կոլտնտեսականների ընդհանուր ժողովը որոշեց մեկ աշխօրի փոխարեն սահմանել մինիմում 25 ռուբլի (հին դրամի արտահայտությամբ)։ Տարեվերջին յուրաքանչյուր աշխօրին լրացուցիչ տրվեց 23 ռ. 50 կոպեկ։ Այսպիսով, վարձատրման առաջավոր մեթոդի կենսագործման հենց առաջին տարում մեկ աշխօրի արժեքը կազմեց 48 ռ. 50 կ.։ Կոլտնտեսության ընդհանուր ժողովի որոշմամբ բաշխվում են նաև մթերքներ՝ ցորեն, պանիր, կարագ, կաթ, մեղր և այլն։

Աշխատանքի ամենամսյա դրամական վարձատրությունից դուրս, կոլտնտեսականները աշխատավարձի տարբերությունը և պարգև հավելումները ստանում են տարեվերջին, երբ բաշխվում է նաև զուտ եկամտի այն մասը, որը ստանում է կոլտնտեսությունը բերքատվության և անասնաբուծական մթերքների արտադրության պլանի գերակատարման համար։ Այդ եկամուտների 35 տոկոսը բաշխվում է կոլտնտեսականներին ըստ նրանց վաստակի, իսկ մնացած 65 տոկոսը տրամադրվում է արտելի հանրային տնտեսության ընդլայնման անհրաժեշտ ֆոնդերի ապահովմանը, այդ թվում նաև կոլտնտեսականների կուլտուր-կենցաղային պահանջների բավարարմանը և թոշակավորմանը։ Կոլտնտեսությունում յուրաքանչյուր տարի, հաջորդ տարում ավանսավորում կատարելու համար, դրամական եկամուտներից առանձնացվում է ավելի քան 70 հազար ռուբլու ֆոնդ։ Կոլտնտեսությունը տարեցտարի հզորանում է, իսկ մեկ մարդ-օրվա հասույթը 1960 թ. եղած 4 ռ. 94 կոպեկից 1965 թ. հասավ 7 ռ. 89 կոպեկի[14]։

Երաշխավորված վարձատրության առավելությունն այն է, որ կոլտնտեսականները տարեսկզբից համոզվում են, որ անդամ պատահարների ու բնական աղետների դեպքում (որպիսիք դեռևս անխուսափելի են գյուղատնտեսության համար), իրենց աշխատանքի դիմաց ստանալու են զոնե սահմանված մինիմում վարձատրությունը։ Այդպիսի գումարներ, առաջավոր մյուս տնտեսությունների նման, շահումյանցիները ստեղծում և առանձնացնում են բերքա-

---

14 Տե՛ս Շահումյանի ՍՄԿԿ XXII համագումարի անվան կոլտնտեսության 1960 և 1965 թթ հաշվեսվությունները։

ռատ տարիներին։ Նրանք ստեղծել են փոխանցիկ (ավանսավորման) ֆոնդեր, շրջանառու միջոցներ, որոնց ավելանում են նաև այլ հիմնարկների հետ կնքված կոնտրակտացիոն պայմանագրերով ստացվող գումարները։ Այդ ճանապարհով ավանսավորման ֆոնդերն անընդհատ աճում են։

Կոլտնտեսականների աշխատանքի երաշխավորված վարձատրության (դրամով և բնամթերքով) նոր սիստեմի կենսագործման շնորհիվ հիմնականում բարձրացել է գյուղի աշխատավորների վարձատրությունը։ Այն 1966—1967 թթ. զգալիորեն ավելի բարձր էր, քան 1965 թ. և առավել ևս՝ նախորդ տարիների համեմատությամբ։ 1965 և 1966 թթ. ընթացքում երկրում կոլտնտեսականների աշխատանքի վարձատրությունը աճեց 37 տոկոսով[15]։ Առանձին կոլտնտեսություններում վարձատրման դեռևս ցածր չափերի ու արտելականների իրավացի տրտունջների առկայությունը հետևանք են վատ տնտեսվարման և սահմանված կարգի սխալ կիրառման։

Կոլտնտեսականներին աշխօրերով վարձատրման կարգը ուներ իր թերությունները։ Միևնույն չափի ու քանակի աշխատանքի համար նույն պայմաններում տարբեր կոլտնտեսություններում վարձատրում էին տարբեր քանակի աշխօրերով, որը չէր կարող դժգոհություն չառաջացներ։ Տարբեր էր լինում նաև աշխօրերի արժեքը։ Վերջապես, վատ էր նաև այն, որ տարեսկզբին աշխօրերի արժեքը նախատեսվում էր ավելի բարձր չափերով, իսկ տարվա վերջին՝ այն շատ ցածր էր լինում, որն էլ թերահավատություն էր առաջացնում կոլտնտեսականների մոտ աշխօրերի արժեքի նկատմամբ։

Ի տարբերություն աշխօրերով վարձատրման, դրամական վարձատրությունն ունի իր առավելությունները. այն պարզ է, կոնկրետ ու շահագրգռող։

Աշխատանքի ամենամսյա դրամական վարձատրությունը բխում է կոլտնտեսականների շահերից, բարձրացնում է նրանց աշխատանքային ակտիվությունը և անձնական, նյութական շահագրգռվածությունը՝ հանրային տնտեսության զարգացման գործում։ Վարձատրման նոր սիստեմը միաժամանակ նպաստում է վերացնելու կոլտնտեսային-կոոպերատիվ և պետական ձեռնարկություններում աշխատանքի վարձատրման ձևերի մեջ եղած տարբերությունները և նպաստում հաշվառքի գործի բարելավմանը։

Կոլտնտեսականների աշխատանքի երաշխավորված ամսական վարձատրության սիստեմ սահմանելով, կոմունիստական կուսակցության նպատակն է՝ հասնել գյուղատնտեսական մթերքների արտադրության զգալի ավելացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, մինիմումի հասցնել կառավարչական ու սպասարկող անձնակազմը, կանխել աշխատուժի հոսունությունը և, որ շատ կարևոր է, ամրապնդել մարդկանց հավատը գյուղատնտեսության վերելքի նկատմամբ։

Հանրապետությունում Արարատի շրջանի Շիրակլուի կոլտնտեսությունը առաջիններից մեկն էր, որ անցավ ամենամսյա երաշխավորված վարձատրության սիստեմին։ Ըստ ամիսների, աշխօրին 1 ռ. 70 կոպեկից մինչև 2 ռուբլի վարձատրելով, վերջնական հաշվառք են կատարում տարեվերջին, երբ հանրագումարի են բերվում տնտեսական տարվա արդյունքները։ Այդ ժամանակ էլ կոլտնտեսականների աշխատանքը վարձատրվում է լրիվ չափով, միաժամանակ կենսագործվում է լրացուցիչ վարձատրության կարգը։ Առաջավոր այս

15 «Правда». 1967, № 216։

տնտեսությունում հետևողականորեն կիրառվում է նաև հանրային արտադրության ավելացման գործում արտելականների նյութական շահագրգռվածության բարձրացման սկզբունքը։ Յուրաքանչյուր տարի պլանից ավելի ստացված եկամուտների կեսը նույնպես բաշխվում է կոլտնտեսականներին։ Վարձատրման այդ սիստեմի շնորհիվ է, նոր հնգամյակի առաջին տարում, դաշտավարության և անասնապահության մեջ աշխատող շարքային կոլտնտեսականներ Ա. Շահվերդիևը, Պ. Հակոբյանը, Ս. Իբրահիմովը, Ա. Գասպարյանը և շատ ուրիշներ ամսական ստանում են 262 ռուբլուց մինչև 335 ռուբլի աշխատավարձ։

Աշխօրերի դիմաց ամենամսյա դրամական վարձատրության սիստեմի առավելություններն ավելի լավ զգացին ետ մնացող շատ տնտեսություններ։ Ահա դրանցից մեկը՝ Շամշադինի շրջանի Նավուրի կոլտնտեսությունը, որը համարվում էր շրջանի հարատև ետ մնացող տնտեսություններից մեկը։ Վարձատրության նոր կարգի սահմանումից հետո բոլոր կոլտնտեսականները մասնակցում են հանրային աշխատանքներին։ Բարձրացավ նրանց պատասխանատվությունն ու աշխատանքի արտադրողականությունը, կոլտնտեսությունն անցավ առաջավորների շարքը։ Անհրաժեշտ օգնություն ստանալով պետությունից և ճիշտ կիրառելով նյութական շահագրգռվածության սկզբունքը, կոլտնտեսությունում զգալիորեն բարձրացել է վարձատրման չափը։ 1966—1967 թթ. այստեղ ավելի քան 100 կոլտնտեսականներ ամսական ստացան 120-ական ռուբլուց ավելի աշխատավարձ, իսկ անասնապահներ Շ. Օհանյանը, Ռ. Պետրոսյանը, Ղ. Այդինյանը և ուրիշներ՝ մոտ հիսուն տոկոսով ավելին։ Շահումյանի շրջանի ՍՄԿԿ XXII համագումարի անվան կոլտնտեսության ղեկավարները քաջ գիտակցելով, որ կոլտնտեսականների անձնական շահագրգռվածությունը միայն բարձր վարձատրության մեջ չէ, հատուկ ուշադրություն են դարձնում նաև նրանց կուլտուր-կենցաղային պայմանների բարելավմանը։ Այստեղ դեռևս 1956 թվականից սահմանված է կոլտնտեսականների հանգստյան օրեր, արձակուրդներ, աշխատանքի մեջ ժամանակավորապես աշխատունակությունը կորցնելու դեպքում՝ կատարվում է աշխատավարձի վճարում, կենսագործվում են նաև շատ այլ միջոցառումներ։ Առաջավոր այս կոլտնտեսության ամրապնդման, հզորացման ու հարստացման գործում շատ աշխատանք, ուժ ու եռանդ է ներդրել գյուղատնտեսական հարուստ գիտելիքների տեր, կոլտնտեսության երկար տարիների հմուտ նախագահ, սոցիալիստական աշխատանքի հերոս Ա. Մեժլումյանը։ Հայաստանում տասնյակ այսպիսի կոլտնտեսություններ կան, որոնց փորձը պետք է լայնորեն տարածել։

Կոլտնեսականների աշխատանքի երաշխավորված վարձատրության կարգը, որը բխում է ՍՄԿԿ XXIII համագումարի որոշումներից, արմատական փոփոխություն մտցրեց կոլտնտեսային գյուղացիության կյանքում։ Այն հանդիսանում է կոլտնտեսային կարգի զարգացմանը խթանող առաջընթաց քայլ։

Առաջավոր տնտեսությունների մեծ մասում նյութական բարիքների արտադրության մեջ աշխատող կոլտնտեսականների աշխատանքի վարձատրությունը կատարվում է գործավարձա-պարգևային սիստեմով, իսկ ժամանակավարձային վարձաչափերը կիրառվում են համեմատաբար դժվար նորմավորվող աշխատանքների համար։ Գործավարձային կարգով են վարձատրվում նաև առաջավոր կոլտնտեսությունների մեխանիզատորները։ Նրանց բրիգադիրներն ու օգնականները վարձատրվում են նաև աշխատանքի ստաժի համար, իսկ

բերքահավաքը սեղմ ժամկետում և անկորուստ կատարելու դեպքում ստանում են լրացուցիչ վարձատրություն։

Կուսակցությունն ու կառավարությունը գյուղատնտեսության մեխանիզատորների նկատմամբ ցուցաբերում են հատուկ հոգատարություն։ Գյուղատնտեսության վերելքի ապահովման գործում մեխանիզատորների անձնական շահագրգռվածությունը բարձրացնելու համար 1966 թ. ապրիլի վերջերին ՍՄԿԿ Կենտկոմը, ՍՍՀՄ Մինիստրների սովետը և ՀամԿԽ-ն որոշում ընդունեցին՝ «Մթերքների արտադրությունն ավելացնելու գործում սովխոզների և գյուղատնտեսական մյուս պետական ձեռնարկությունների մեքենավար-տրակտորիստների նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու մասին»[16]։ Այդ որոշմամբ մտցվեցին համապատասխան փոփոխություններ ու լրացումներ մեխանիզատորների աշխատանքի վարձատրության մեջ։ Մասսայական բերքահավաքի առաջին տասն օրվա ընթացքում հերթափոխային նորմաները կատարող մեքենավար-տրակտորիստների վարձատրությունն ավելացվեց 60—100 տոկոսով։ Սովխոզների, «Գյուղտեխնիկայի» շրջանային բաժանմունքների, մեքենա-անասնապահական կայանների, մեքենա-մելիորատիվ ու մարգագետնա-մելիորատիվ կայանների և գյուղատնտեսական ու ջրատնտեսական մյուս պետական ձեռնարկությունների մեքենավար-տրակտորիստների համար աշխատավարձի հավելում սահմանվեց 6—25 տոկոսով՝ տվյալ տնտեսությունում ըստ մասնագիտության աշխատելու ստաժի համար։ Նույն որոշմամբ սովխոզների բանվորների աշխատանքի վարձատրության միասնական կարգ է սահմանվել նաև բուսաբուծության գծով, ելնելով տարիֆային դրույքից և մթերքների արտադրության տարեկան պլանից։

Այդ որոշումը կարևոր նշանակություն ունեցավ գյուղատնտեսության մեխանիզատորների աշխատանքի ճիշտ գնահատման ու նրանց անձնական շահագրգռվածությունը բարձրացնելու գործում։ Ցանկալի է, որ խրախուսանքի նման միջոցառումներ ձեռնարկվեն բոլոր կոլտնտեսություններում, հետևելով առաջավոր տնտեսությունների օրինակին։

Վարձատրման նոր սիստեմը միաժամանակ նպաստում է վերացնելու կոլտնտեսային-կոոպերատիվ և պետական ձեռնարկությունում աշխատանքի վարձատրման ձևերի միջև եղած տարբերությունները և մեծ չափով նպաստում հաշվառքի գործի բարելավմանը, կանխում է աշխատուժի հոսունությունը դեպի քաղաքները, նպաստում բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդմանը, նրանց միջև եղած էական տարբերությունների վերացմանը։

Երկրում նոր հնգամյակի առաջին տարում ավելի քան երեք հազար կոլտնտեսություն փոխադրվեցին բանկային ուղղակի վարկավորման, ներառյալ աշխատանքի վարձատրությունը[17]։ Այդ պրոցեսը շարունակում է աճել արագ թափով։ Անընդհատ կատարելագործվում են պետության և կոլտնտեսությունների վարկային փոխհարաբերությունները։

Մինչև Կենտկոմի մարտյան պլենումը, հանրային ցանքատարածությունների վնասվելու և գյուղատնտեսական կենդանիների անկումների դեպքում ապահովագրական մարմիններից ստացված շատ քիչ գումարներով հնարավոր

---

16 «Правда», 1966, № 121։

17 ՍՍՀՄ յոթերորդ գումարման Գերագույն սովետի երկրորդ սեսիայի նյութերից. «Известия», 1966, 16 декабря.

չեր վերականգնել կորուստները։ Կենտկոմի պլենումի որոշումների հիման վրա ավելացվեցին կոլտնտեսություններին վնասի հատուցման պետական ապահովագրական գումարները։ Օրինակ, եթե խոշոր եղջերավոր անասունների պարտադիր կոպարային ապահովագրության գծով 1962—1964 թթ. Հայաստանի կոլտնտեսությունների ստացած տարեկան միջին գումարը կազմել է 159 հազար ռուբլի, ապա 1966 թ. այն հասավ 279 հազար ռուբլու[18]։

Նոր հնգամյակի առաջին տարում ապահովագրական գումարների վճարումները 33 տոկոսով ավելի էին, քան 1965 թ.[19]։ Տարերային աղետներից ու դժբախտ պատահարներից առաջացած վնասները վերականգնելու համար պետական ապահովագրության օրդանները 1966 թ. հանրապետության կոլտնտեսություններին վճարել են ավելի քան 8,7 միլիոն ռուբլի[20]։

Գյուղատնտեսության վերելքի ապահովման գործում կարևոր դեր է խաղում պետական բյուջեն։ Դրա վառ վկայությունն է այն, որ 1966 թ. հանրապետության գյուղատնտեսության զարգացման համար նախատեսված 110,8 միլիոն ռուբլուց՝ 75,1 միլիոն ռուբլին հատկացվեց պետական բյուջեից։

Գյուղատնտեսության զարգացման խթանման նպատակով, ՍՄԿԿ XXIII համագումարի որոշումներով ավելի բարձրացվեց պետական վարկի դերը։ Սահմանվել է կոլտնտեսությունների վարկավորման նոր կարգ։ Մինչև 1965 թ. կոլտնտեսությունները բանկից դրամական կանխավճարներ էին ստանում կոնտրակտացիոն պայմանագրերով, որը շատ հաճախ ձգձգվում էր և մեծ դժվարություններ առաջացնում ու վնասում կոլտնտեսություններին։ Կոլտնտեսությունների վարկավորումը բարելավելու, նրանց ֆինանսա-տնտեսական գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու և աշխատանքի վարձատրության գծով կոլտնտեսականների հետ ժամանակին հաշիվները փակելու նպատակով ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1966 թ. որոշմամբ աստիճանաբար իրականացվում է կոլտնտեսությունների անցումը բանկային վարկավորման[21]։ Այդ որոշման համաձայն, դրամական միջոցների սեզոնային պակասի դիմաց կոլտնտեսություններին ուղղակի վարկ է տրամադրվում, ներառյալ նաև կոլտնտեսականների աշխատանքի վարձատրության դրամական մասը։ Պետական բանկին պարտավորեցված է կոլտնտեսություններին դրամական ավանսներ տալ մթերող կազմակերպությունների կոնտրակտացիոն պայմանագրերի համաձայն։ Միաժամանակ բանկը կոլտնտեսություններին կարճատև վարկեր է տալիս արտադրության ծախսերի համար անհրաժեշտ միջոցների սեզոնային պակասը ծածկելու նպատակով, որպիսին նա ի վիճակի չէ փակելու իր միջոցներով։

ՍՍՀՄ Մինիստրների սովետը որոշում ընդունեց նաև կոլտնտեսությունների, սովխոզների և գյուղատնտեսական այլ ձեռնարկությունների արտադրական կարիքների համար մեքենաների, պահեստամասերի, վառելիքի վաճառքի գների և պետական էլեկտրակայաններից ստացվող էլեկտրական էներգիայի

---

18 Տե՛ս Հայկական ՍՍՀ պետական ապահովագրության վարչության 1962—1966 թթ. հաշվետվությունները։

19 ՍՍՀՄ յոթերորդ գումարման Գերագույն սովետի երկրորդ սեսիայի նյութերից, «Известия», 1966, 16 декабря.

20 ՀՍՍՀ վեցերորդ գումարման Գերագույն սովետի իններորդ սեսիայի նյութերից, «Սովետական Հայաստան», 1966, դեկտեմբերի 28։

21 «Известия», 1966, 16 декабря.

սակագինը իջեցնելու մասին։ 1966 թվականի հունվարի 1-ից յուրաքանչյուր կիլովատ ժամի համար սահմանված է մեկ կոպեկ[22]։

Հայտնի է, որ կոլտնտեսությունների գրամական եկամուտների հիմնական մասը ստացվում է տնտեսական տարվա երկրորդ կեսին՝ նրանց վաճառած հացահատիկի, անասնապահական մթերքների, բանջարանոցային կուլտուրաների, այգիների բերքի ու գյուղատնտեսական հումքի վաճառքից։ Մինչդեռ գյուղատնտեսական արտելների մեծ մասը, մինչ այդ, ֆինանսական մեծ դժվարություններ էր կրում, քանի որ նրանց ընթացիկ հաշիվներում ծախսեր կատարելու համար անհրաժեշտ միջոցներ չէին լինում։ Շատ հաճախ հնարավոր չէր նույնիսկ տրակտորների ու մյուս մեքենաների համար անգամ վառելիք ու պահեստային մասեր գնել։

Բանկային վարկավորման նոր կարգի շնորհիվ այդ բոլոր դժվարություններն ու անհարմարությունները վերացվեցին։ Այժմ տարվա բոլոր ամիսներին հանրային տնտեսությունները երաշխավորված գումարներ են ունենում ընթացիկ ծախսումներ կատարելու և կոլտնտեսականներին ամսական դրամական վարձատրություն տալու համար։

Վարկավորման նոր որոշմամբ սահմանված է, որ կոլտնտեսությունները կարող են վարկեր ստանալ նաև կապիտալ ներդրումների գծով։ Կոլտնտեսություններին երեք տարի ժամկետով վարկեր է տրամադրվում խոշոր եղջերավոր անասունների լավ ցեղատեսակներ գնելու համար, իսկ 15 տարի ժամկետով վարկեր են տրամադրվում հանրային ֆոնդի բնակելի տների, մանկական հիմնարկների, դպրոցների, ակումբների և բաղնիքների շենքերի շինարարության համար։

Վարկավորման նոր սիստեմը նպաստավոր պայմաններ է ստեղծում կոլտնտեսությունների գործունեության համար և մեծ չափով խթանում է արտելականների նյութական շահագրգռվածության բարձրացմանը։ Սովետական կառավարության այդ միջոցառումը միաժամանակ մեծ չափով կնպաստի սեփականության երկու պետական-համաժողովրդական և կոլտնտեսային-կոոպերատիվ ձևերի մերձեցմանը։

Կոլտնտեսություններում ու սովխոզներում աշխատողների անձնական շահագրգռվածությունն էլ ավելի բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է կատարելագործել աշխատանքի կազմակերպման և վարձատրման գործող ձևերը։ Ելնելով տվյալ տնտեսության, բրիգադի, օղակի, ֆերմայի հնարավորություններից, մեր կարծիքով, պետք է սահմանել մեկ միավոր հեկտարի, կամ մեկ ֆուրաժային կովի հաշվով գյուղատնտեսական մթերքների արտադրության բարձր պլան, սահմանելով նաև վարձատրման չափը, իսկ այդ պլանից ավելին արտադրված մթերքների որոշակի մասը թողնել արտադրողի տնօրինությանը։ Օրինակ, այժմ կարտոֆիլի մեկ հեկտարից պահանջվում է ստանալ 80—90 ցենտներ բերք։ Եթե կոլտնտեսականը կամ սովխոզի բանվորը իր անձնվեր աշխատանքով ստանա 150—180 ցենտներ, ապա կոլեկտիվի որոշմամբ ավելին արտադրած մթերքի ասենք 50—70 տոկոսը (կամ նրա արժեքը) կտրվի նրա արտադրողին։

Վարձատրման այս եղանակի կենսագործման դեպքում հանրային տնտեսությունները շատ եկամուտ կստանան, զգալիորեն կավելանա գյուղատնտե-

22 Նույն տեղում։

սական մթերքների արտադրությունը, կվերանա գյուղից դեպի քաղաք կատարվող բանվորական ուժի հոսքը։ Այս և այլ միջոցառումների կիրառման հետևանքով ոչ միայն կվերանա գիմաղրկությունը, այլև կբարձրանա անձնական շահագրգռվածությունն ու պատասխանատվությունը, երկրում կստեղծվի գյուղատնտեսական մթերքների ու հումքի առատություն, կոլտնտեսականների ու սովխոզների բանվորների համար պայմաններ կստեղծվեն աստիճանաբար հրաժարվելու անձնական օգտագործման հողակտորից (տնամերձից) ու անասուններից։

Կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը հետևողականորեն կենսագործում են գյուղատնտեսական աշխատողների նյութական շահագրգռվածության սկզբունքը, անշեղորեն վարում գյուղատնտեսական հետագա վերելքի գիծ։